ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N <<ԿՈՏ-ՄԱԾՁԲ-25/13>>

ք.Հրազդան ---.----------.2025թ.

ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմը՝ ի դեմս գլխավոր քարտուղար Լևոն Պետրոսյանի, ով գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «Լեգալեքս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Էմին Պերճի Խաչատրյանը, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող»-ի կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով՝ Կատարողը պարտավորվում է «Լեգալեքս» ՍՊԸ-ի փաստաբանների միջոցով Պատվիրատու ընկերությանը տրամադրել իրավաբանական խորհրդատվություն, ինչպես նաև՝ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննված թիվ ԿԴ/0311/02/25 քաղաքացիական գործով վերաքննիչ բողոքի կազմում, վերաքննիչ դատարանում ներկայացուցչություն, ինչպես նաև՝ վճռաբեկ բողոքի կամ պատասխանի կազմում և վճռաբեկ դատարանում ներկայացուցչություն, իսկ Պատվիրատուն պարտավորվում է կատարողին վճարել այդ ծառայության դիմաց:

2.Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1.Կատարողը պարտավոր է՝

2.1.1.Ծառայությունները մատուցել պատշաճ որակով,

2.1.2. Ծառայությունները կատարել անձամբ, իսկ անհրաժեշտության դեպքում դրանք վերահանձնարարել «Լեգալեքս» ՍՊԸ-ի փաստաբաններին կամ իրավաբանական գործունեության լիցենզիա ունեցող այլ կազմակերպության աշխատակիցներին:

2.1.3.պատվիրատուի պահանջով նրան հաղորդել գործի ընթացքի վերաբերյալ բոլոր տեղեկությունները,

2.1.4.առանց պատվիրատուի գրավոր համաձայնության չհրապարակել հանձնարարության ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունները,

2.1.5.իր մասնագիտական գործունեությունն իրականացնելուց հետևել ՀՀ գործող օրենսդրությամբ, Պալատի կանոնադրությամբ և Փաստաբանի վարքագծի Կանոնագրքով սահմանված նորմերի պահանջներին, լինել սկզբունքային և օրինապահ, հարգել իրեն դիմած վստահորդի իրավունքները, օրինական շահերը, պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը,

2.1.6.պատվիրատուին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, պատվիրատուի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում,

2.1.7.հրաժարվել պատվիրատուի հանձնարարությունը ընդունելուց, եթե պատվիրատուի հանձնարարությունը և նրա համար ցանկալի արդյունքի հասնելու միջոցները օրինական չեն և կատարողի կողմից պատվիրատուին դրանց կիրառման անթույլատրելիության մասին պարզաբանելուց հետո էլ, այդուհանդերձ, չի հաջողվում պատվիրատուի հետ համաձայնության գալ և նրան հետ պահել անօրինական միջոցների կիրառման մտադրությունից,

2.1.8.պայմանագիրը լուծելիս պատվիրատուին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել՝ եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ,

2.1.9.պայմանագիրը լուծելիս պատվիրատուին վերադարձնել հանձնարարության կատարման ընթացքում իր մոտ պահվող պատվիրատուի գործին վերաբերվող բոլոր փաստաթղթերը:

2.2.Կատարողը իրավունք ունի՝

2.2.1.Իր ծառայությունների համար Պատվիրատուից ստանալ վարձատրություն,

2.2.2. իր մասնագիտական պարտավորությունների բարեխիղճ և որակյալ կատարումից բացի, այլ երաշխավորություններ չի կարող տալ, մասնավորապես չի կարող երաշխավորել հանձնարարության կատարման արդյունքը՝ անկախ արդյունքի կանխատեսելիությունից,

2.2.3.բացի հոնորարից պատվիրատուից պահանջել և ստանալ նաև այն ծախսերը, որոնք անհրաժեշտ են հանձնարարության կատարման համար (ներգրաված մասնագետների աշխատանքի վարձատրությունը, թարգմանության, նոտարական, հեռախոսային խոսակցությունների, տրանսպորտային ծախսեր և այլն),

2.2.4.հրաժարվել իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի կատարումից, եթե պատվիրատուն կատարողի պարզաբանումներին հակառակ կատարում է հանձնարարության հետ կապված գործողություններ, որոնք օրենքով արգելված են,

2.2.5.հրաժարվել իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի կատարումից, եթե պատվիրատուն պնդում է ակնկալվող արդյունքի ձեռքբերումը, որը օբյեկտիվորեն դարձել է անհնարին նոր ի հայտ եկած հանգամանքների կամ փաստերի բերումով,

2.2.6.հրաժարվել իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի կատարումից, եթե պատվիրատուն թույլ է տալիս իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով իր ստանձնած պարտավորությունների կոպիտ խախտումներ,

2.2.7.հրաժարվել իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի կատարումից, եթե հանձնարարության պատշաճ կատարումը անհնար է դառնում պատվիրատուի կողմից կատարողի խորհուրդներին հակառակ գործողությունների կատարելու հետևանքով,

2.2.8.հրաժարվել իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի կատարումից, եթե պատվիրատուն կատարում է Կատարողի պատիվը, արժանապատվությունը և հեղինակությունը/այդ թվում նաև մասնագիտական համբավը/ անվանարկող գործողություններ:

2.3.Պատվիրատուն պարտավոր է՝

2.3.1. Վճարել սույն պայմանագրի 3.1 կետում նշված հոնորարի և 2.2.3 կետում նշված ծախսերի գումարը,

2.3.2.համագործակցել Կատարողի հետ սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների կատարումը հնարավոր դարձնելու համար:

2.4.Պատվիրատուն իրավունք ունի՝

2.4.1.Ցանկացած ժամանակ ստուգել ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը,

2.4.2.հրաժարվել ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը կատարելուց՝ Կատարողի փաստացի կատարած ծախսերը վճարելու պայմանով,

2.4.3.ցանկացած ժամանակ կատարողից ստանալ գործի վերաբերյալ իրեն հետաքրքրող

3.Պայմանագրի գինը

3.1.Պատվիրատուն վերոհիշյալ փաստաբանական ծառայության դիմաց Կատարողին է փոխանցում 600.000 /վեց հարյուր հազար/ ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

3.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 180 000 (մեկ հարյուր ութսուն) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:[1]

3.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25 ---ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

3.2.1.հոնորարը՝ պայմանագրով նախատեսված իրավական օգնություն ցույց տալու համար կատարողին վճարվող գումարն է,

3.2.3.հոնորարի չափը որոշվում է Կատարողի և Պատվիրատուի փոխադարձ համաձայնությամբ, որում կարող է հաշվի առնվել՝ աշխատանքի ծավալը և բարդությունը, կատարման համար անհրաժեշտ ժամանակի տևողությունը, կատարողի փորձը և որակավորումը, ժամկետները, կատարվող աշխատանքի հրատապության աստիճանը և այլ հանգամանքներ,

3.2.4.հոնորարի չափը կարող է փոփոխվել պայմանագրով փաստացի ստանձնած պարտավորությունների ծավալի փոփոխմանը համաչափ, ինչպես նաև հանձնարարության կատարման ժամկետների, պատվիրատուի նոր կամ լրացուցիչ առաջադրանքի հետ կապված, եթե դրանք ընդունվում են Կատարողի կողմից կամ առանց դրանց հիմնական հանձնարարությունը կատարել հնարավոր չէ:

4. Պայմանագրի լուծումը

4.1.Իրավական օգնություն ցույց տալու մասին պայմանագիրը Կատարողի և Պատվիրատուի փոխադարձ համաձայնությամբ կարող է լուծվել ցանկացած պահի:

4.1.1.Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած պահի հրաժարվել իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի կատարումից, կատարողի փաստացի կատարած աշխատանքի համար վճարելու պայմանով: Կատարողը չպետք է կատարի այնպիսի գործողություններ, որոնք որևէ կերպ կարող են խոչընդոտել պատվիրատուի այդ իրավունքի իրականացմանը:

4.1.2.Կատարողի կողմից իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի կատարումից հրաժարվելու դեպքերում, կատարողը պարտավոր է բացատրել Պատվիրատուին իրավական օգնություն ցույց տալու պայմանագրից հրաժարվելու պատճառները և զերծ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են վնասել պատվիրատուի շահերին:

---

[1] *Կապարողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում*

5.Պայմանագրի գործողության ժամկետը

5.1.Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և սույն պայմանագրի 1.1 կետում նշված ծառայության մատուցումը ավարտվում է պայմանագրով նշված արձանագրության բողոքարկման կապակցությամբ վերջնական դատական ակտի կայացմամբ:

5.1.1.սույն պայմանագրի գործողության դադարեցման դեպքում կողմերի սույն պայմանգրով ստանձնած և չկատարած պարտավորությունները ենթակա են պարտադիր կատարման, եթե ՀՀ Օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

6.Կողմերի պատասխանատվությունը

6.1.Սույն պայամանգրով նախատեսված պարտավորությունների չկատարման դեպքում կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Վեճերի լուծման կարգը

7.1.Կողմերի միջև սույն պայմանագրի հետ կապված վեճերը լուծվում են փոխադարձ համաձայնությամբ: Փոխադարձ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. Այլ դրույթներ

8.1.Սույն պայմանագիրը կազմված է չորս էջից, կազմվում է երկու օրինակից՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ: Երկու օրինակն էլ ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

8.1.1. մինչև սույն պայմանագիրը ստորագրելը Կողմերը՝ Պատվիրատուն և Կատարողը կարդում են այն ամբողջությամբ, որից հետո Կողմերը կազմված պայմանագրի բոլոր դրույթների հետ համաձայն լինելու դեպքում ստորագրում են այն՝ստորագրելով Կողմերի համար կազմված երկու օրինակների վերջին էջի ներքևի հատվածում:

8.2.սույն պայմանագրում լրացումներ ու փոփոխություններ կատարվում են կողմերի համաձայնությամբ և հանդիսանում են սույն պայմանագրի անբաժանելի մասը:

9.Կողմերի հասցեները և ստորագրությունները

Պատվիրատու՝	Կատարող՝
ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Լևոն Պետրոսյան	«Լեգալեքս» ՍՊԸ Տնօրեն՝ Էմին Խաչատրյան ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Աբովյան, Բարեկամության փ. 1/1/2
հասցե ՀՀ Կոտայքի մարզ, Ք. Հրազդան, Սահմանադրության հր. 1	
ՀՎՀՀ՝ 03029935 ՀԾՀ 90012122005 0	ՀՎՀՀ 03541132 «Evocabank» ՓԲԸ Հ/Հ՝1660003098480100

Հավելված N 1
---- սեպտեմբերի 2025թ. կնքված
<< ԿՈՏ-ՄԱԾՁԲ-25/13>> ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը
1	75231100/1	իրավաբանական խորհրդատվություն, ինչպես նաև՝ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննված թիվ ԿԴ/0311/02/25 քաղաքացիական գործով վերաքննիչ բողոքի կազմում, վերաքննիչ դատարանում ներկայացուցչություն, ինչպես նաև՝ վճռաբեկ բողոքի կամ պատասխանի կազմում և վճռաբեկ դատարանում ներկայացուցչություն	դրամ	600000.00	1	ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմ, ք.Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք	2025թ. Ընթացքում անհրաժեշտության դեպքում համաձայնությամբ կնքելու միջոցով նաև մինչև 25.12.2026թ

Պատվիրատու՝
ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար Լևոն Պետրոսյան

հասցե ՀՀ Կոտայքի մարզ, Ք. Հրազդան,
Սահմանադրության հր. 1

ՀՎՀՀ՝ 03029935
Հ/Հ 900121120050

(ստորագրություն)

Կ.Տ.

Կատարող՝
«Լեգալեքս» ՍՊԸ
Տնօրեն՝ Էմին Խաչատրյան
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Աբովյան,
Բարեկամության փ. 1/1/2

ՀՎՀՀ 03541132
«Evocabank» ՓԲԸ
Հ/Հ՝1660003098480100

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 1
---- սեպտեմբերի 2025թ. կնքված
<< ԿՈՏ-ՄԱԾՁԲ-25/13>> ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025-2026թթ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	75231100/1	ծառայություններ դատական ոլորտում		------	------	------	------	------	------	------	600000.00	600000.00	600000.00	600000.00	600000.00

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Պայմանագրով նախատեսված կանխավճար 25.12.2025թ.											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	75231100/1	ծառայություններ դատական ոլորտում		------	------	------	------	------	------	------	180000.00	180000.00	180000.00	180000.00	180000.00

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

Պատվիրատու՝
ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար Լևոն Պետրոսյան
հասցե ՀՀ Կոտայքի մարզ, Ք. Հրազդան,
Սահմանադրության հր. 1
ՀՎՀՀ՝ 03029935
Հ/Հ 900124120050

(ստորագրություն)

Կ.Տ.

Կատարող՝
«Լեգալեքս» ՍՊԸ
Տնօրեն՝ Էմին Խաչատրյան
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Աբովյան,
Բարեկամության փ. 1/1/2
ՀՎՀՀ 03541132
«Evocabank» ՓԲԸ
Հ/Հ՝1660003098480100

(ստորագրություն)

Կ.Տ.